Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ) հայտարարում է Աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնում փորձագետ ներգրավելու համար

Փորձագետը ներգրավվում է Աշխատակազմում կրթության ոլորտի գործառույթներ Իրականացնելու նպատակով:

Աշխատանքային պարտականություններն են՝

ա. Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և վարչատնտեսական մասի համակարգողների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների հավակնորդների փաստաթղթերի ընդունում,փաթեթների նախապատրաստում,
բ. Հանրակրթական ուսումնական հաստատությունների նոր կանոնադրությունների նախագծերի նախապատրաստում,
գ. Հանրակրթական ուսումնական հաստատությունների խոհանոցային նյութատեխնիկական վերազինման հետ կապված աշխատանքների ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ եզրակացությունների ներկայացում:

Փորձագետի նններկայացվող պահանջներն են.

ՀՀ քաղաքացիություն, բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ կրթության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ, համակարգչով և ժամանակակիցայլտեխնիկականմիջոցներովաշխատելուունակություն, ինչպես նաև իրավական ակտերի մշակման փորձառություն:

Փորձագետը ներգրավվում է 3 /երեք/ ամիսժամկետով՝ 2023 թվականի հունիսի 6-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 6-ը:

Աշխատավարձը 267072/ երկու հարյուր վաթսուն յոթ հազար յոթանասուներկու/ ՀՀդրամ:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

*դիմում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի անունով.
*տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների նաշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի (ների), վկայական (ների), աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում

անհրաժեշտ է

ներկայացնել տեղեկանք /ներ համապատասխան մարմնից /ներից) պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

*արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից կցագրման վկայականի պատճենները՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

*մեկ գունավոր լուսանկար 3X4 սմ չափսի,

*անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը

*հայտարարություն ՝նշված սահմանափակումների բացակայության մասին.

-պաշտոնից ազատվել կամ ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու,

-օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու,

-օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու,

- «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու,

-ՀայաստանիՀանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա Նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման Անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:

Ընտրությունը կատարվելու է դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով:

Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ, կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

Աշխատավայրը՝ ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16

Փաստաթղթերն ընդունվում են ամենօր՝ ժամը 09:00 – 13:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումներիընդունմանվերջնաժամկետնէ՝ 2023թ. հունիսի2-ընեռաոյալ:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմ /ք.Գյումրի, Գ.Նժդեհի 16, անձնակազմի կառավարման բաժին, հեռախոս 03124-90-00-156/ էլեկտրոնային փոստի հասցեն՝ shirak.andznakazm@mta.gov.am):

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյանին

.....- ից
Դիմողի անուն հայրանուն ազգանունը

.....
իմողի հեռախոսի համարը

.....
էլեկտրոնային հասցեն

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀՇիրակի մարզպետի աշխատակազմի կողմից հրապարակված հայտարարությանը՝ ներկայացնում եմ որպես փորձագետ ներգրավվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝

1. Անձնագրի (ՀԾ համարանիշ) _____ էջ,
2. Դիպլոմի (դիպլոմների) _____ էջ,
3. Աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի _____ էջ,
4. Զինվորական գրքույկի (առկայության դեպքում) _____ էջ:

Առդիր՝ _____ էջ:

_____
(ստորագրություն, անունը, ազգանունը)

_____
(դիմումը ներկայացնելու ամսաթիվը)

Նախազգուշացված եմ փորձագետի պաշտոնում նշանակվելու դեպքում կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին: